Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 30-ի N 1584-Ն որոշման

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆՈՆ ՔԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Հանձնարարականի, կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատասխանատուն	Համակատարողը	Ժամկետը	2022 թ. ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը
1	2	3	4	5	6	7
1. Կառավարման համակարգի կատարելագործում						
1.1.	«Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման համա-կարգի բարելավում	1) «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային լողափի կազմակերպում	Շրջակա միջավայրի նախարարություն	Արտակարգ իրավիճակների նախարարություն Առողջապահության նախարարություն ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով	2022 թ. և շարու-նակական	Պետական բյուջեի միջոցների և օրենքով չարգելված միջոցների հաշվին

		2) «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարողությունների զարգացում (մասնավորապես՝ տարեկան անտառպլանավորման, հատատեղերի հատկացման տեղորոշման), մասնագիտական ունակությունների կատարելագործում 3) Սևանա լճի առափնյա տարածքում գտնվող շուրջ 2400 հանգստի, սննդի (300 մշտական գործող) օբյեկտների կոյուղու և կենցաղային հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանների կառուցում և շահագործում	Շրջակա միջավայրի նախարարություն Օբյեկտները շահագործող տնտեսավարողներ	Շրջակա միջավայրի նախարարություն	2022 թ. 2022 թ. շարունա-կական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին Օբյեկտները շահագործող տնտեսվարողների միջոցների հաշվին
1.2.	Սևանա լճի մասին օրենսդրության վերանայում	Գործող օրենսդրության վեր-լուծություն՝ ներկա իրավիճակի վերլուծության և գնահատման, գիտական հիմնավորումների և վերլուծությունների թարմաց-ման, կլիմայի փոփոխության նկատմամբ էկոհամակարգի խոցելիության վերլուծության և գնահատման, բացասական սցենարների նկատմամբ	Շրջակա միջավայրի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022 թ.	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին

		կանխարգելիչ միջոցառում-ների և առաջարկությունների ներկայացման վերաբերյալ տեխնիկական առաջադրանքի կազմում				
2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կատարելագործման միջոցառումներ						
2.1.	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի մոնիթորինգի իրականացում	1) Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության, այդ թվում՝ ռադիոակտիվ աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, միջոցառումների մշակում 2) Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում հիդրոկենսաբանա-կան և հիդրոօդերևութաբանա-կան մոնիթորինգի իրականացում 3) Սևանա լճի ջրհավաք ավազանում ստորերկրյա ջրերի մոնիթորինգի իրականացում	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Գեղարքունիքի մարզպետարան	2022 թ. և շարունա-կական	«Հիդրոօդերևութաբա-նության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմա-կերպության կողմից կատարվող պետական նշանակության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագրի «Հիդրոօդերևութաբա-նություն, շրջակա միջավայրի մոնիթո-րինգ և տեղեկատվու-թյան ապահովում» միջոցառման շրջանակներում և Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից 2022 թ. ընթացքում

						կատարման ենթակա պետական նշանակության աշխատանքների ծրագրին համապատասխան
2.2.	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում մոնիթորինգի կարողությունների բարելավում, հզորացում	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական կարողությունների զարգացում	Շրջակա միջավայրի նախարարություն		2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.3.	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տեղեկատվական համակարգի ստեղծում	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տեղեկատվական համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքի մշակում	Շրջակա միջավայրի նախարարություն	ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.4.	Սևանա լճից ոռոգման սեզոնին ջրի արդյունավետ օգտագործման նպատակով մարզերում, համայնքներում և Սևանա լճի հարակից համայնքներում ջրախնայող տեխնոլոգիաների օգտագործում	Կլիմայի փոփոխության հետևանքով սակավաջրության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով, մարզերում, համայնքներում և Սևանա լճի հարակից համայնքներում ջրախնայող տեխնոլոգիաների օգտագործումը (կաթիլային ոռոգման ցանցի ներդրմամբ) հնարավորություն կտա սակավ և սահմանափակ քանակությամբ ջրային ռեսուրսներով իրականացնել արդյունավետ ոռոգում, հնարավորինս նվազեցնելով	Էկոնոմիկայի նախարարություն	Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի, Արագածոտնի մարզպետարաններ	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին

		Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողումը, ինչը կնպաստի նաև համայնքների միջև ոռոգման ջրի հավասարաչափ բաշխմանը:				
2.5.	Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի սպասարկման, շահագործման ու պահպանման աշխատանքների իրականացում	Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի շահագործում և պահպանում՝ օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե		2022 թ. և շարունակական	ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 1016-Ա որոշմամբ Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգը սկսած 2022 թվականի հունվարի 1-ից անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվել է «Ձրառ» ՓԲԸ-ին: Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով պահպանման ծախսերի համար հատկացվում է 205,800.0 հազ. դրամ:

2.6.	Ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսության ազդեցության գնահատում Սևանա լճի էկոհամակարգի վրա	Ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսության գործունեության հետևանքով կենսածին տարրերի (ֆոսֆոր, ազոտ) քանակի հաշվարկում և գնահատում, ազդեցությունը Սևանա լճի էկոհամակարգի վրա	Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ) Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	Շրջակա միջավայրի նախարարություն Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022 թ.	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.7.	Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում	Առաջնահերթ մաքրման ենթակա, մասնավորապես՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա անտառաշերտի մաքրման գործընթացն ապահովելու նպատակով անհրաժեշտ մասնագիտացված մեքենամեխանիզմների ձեռքբերում, անտառմաքրման աշխատանքների իրականացում	Շրջակա միջավայրի նախարարություն	Գեղարքունիքի մարզպետարան Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում» միջոցառում՝ 208,238.5 հազ. դրամ
2.8.	Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնում	Սևանա լճի շրջակայքում 5 հեկտար անտառաշերտի հիմնում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ուժերով	Շրջակա միջավայրի նախարարություն	Գեղարքունիքի մարզպետարան	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.9.	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների ապամոնտաժում և թափոնների	Ինքնակամ կառուցված շենք-շինությունների սեփականատերեր	Շրջակա միջավայրի նախարարություն Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022 թ. և շարունակական	Ինքնակամ կառուցված մաքրման ենթակա շենք-շինությունների սեփականատերերի միջոցների հաշվին,

	մաքրման աշխատանք-ների իրականացում	մաքրում 1901.5 մ բացարձակ նիշից ներքև գտնվող պետական և համայնքային նշանակության շենք-շինությունների ապամոնտաժում՝ համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում				տիրազուրկ շինություն-ների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.10.	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների հաշվառում, օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում	Կենդանական ռեսուրսների, այդ թվում՝ ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում և օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Գեղարքունիքի մարզպետարան	2022 թ. և շարունա-կական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» միջոցառման շրջանակներում՝ 7,590.4 հազ. դրամ և օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.11.	Անտառաշերտերի և հողահանդակների հաշվառում, գույքագրում	Ափամերձ անտառների գույքագրման և հողօգտագործման քարտեզների թարմացման նպատակով տեխնիկական առաջադրանքի կազմում	Շրջակա միջավայրի նախարարություն	Գեղարքունիքի մարզպետարան Կադաստրի կոմիտե	2022 թ. և շարունա-կական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին

2.12.	«Սևան» ազգային պարկի և համայնքների միջև սահմանների ճշգրտում	«Սևան» ազային պարկի սահմանների չափագրում, կոորդինատների ճշգրտում և ամրագրում: «Սևան» ազգային պարկի և հարակից համայնքների հետ խնդրահարույց տարածքների հստակեցում, համադրվող տարածքների խնդրի կարգավորում	Շրջակա միջավայրի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Կադաստրի կոմիտե Գեղարքունիքի մարզպետարան Քաղաքաշինության կոմիտե	2022 թ. և շարունա-կական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.13.	Սևանա լճի ջրհավաք ավազանում առաջա-ցած կեղտաջրերի մաքրում	Գյուղական առափնյա համայնք-ներում ժամանակակից լոկալ մաքրման կայանների տեղադրում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության ջրային կոմիտե Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Շրջակա միջավայրի նախարարություն Քաղաքաշինության կոմիտե	2022 թ. և շարունա-կական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցների հաշվին
2.14.	Գավառի, Մարտունու և Վարդենիսի կեղտա-ջրերի մեխանիկական մաքրման կայաններում կենսաբանական մաքրման և տիղմի մշակման կառուցվածք-ների շինարարության	Կենսաբանական մաքրման և տիղմի մշակման կառուցվածք-ների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և շինարարության ֆինանսավորման աղբյուրի (աղբյուրների) հստակե-ցում, գործող մեկ կեղտաջրերի մաքրման կայանում պիլոտային	Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության ջրային կոմիտե «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական	Շրջակա միջավայրի նախարարություն Քաղաքաշինության կոմիտե	2022 թ. և շարունա-կական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին

	նախագծանախահաշ-վային փաստաթղթերի մշակում, կենսաբանա-կան մաքրում իրակա-նացնող կեղտաջրերի մաքրման կայանների նախագծում	ծրագրով կենսաբանական մաքրման ու տիղմի մշակման կառուցվածքների նախագծանա-խահաշվային փաստաթղթերի մշակում ու շինարարության իրականացում՝ համապատասխան ֆինանսավորման առկայության պարագայում	ընկերություն (համաձայնությամբ)	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)		
2.15.	Այլընտրանքային ջրային ռեսուրսների օգտագործում, նոր ջրամբարների նախագծում, կառուցում	Գեղարքունիքի մարզի Արգիճիի և Աստղաձորի ջրամբարների նախագծում, կառուցում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե	Շրջակա միջավայրի նախարարություն Քաղաքաշինության կոմիտե	2022 թ. և շարունա-կական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.16.	Սևանա լճի էկոլոգիա-կան կայունությունը չխախտող և լճի ջրային դրական հաշվեկշիռն ապահովող ջրթողում-ների և անվերադարձ ջրառների տարեկան պլանների ու ընթացիկ գրաֆիկների կազմում և Շրջակա միջավայրի նախարարություն ներկայացում (ապրիլ)	«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2022 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման (այսուհետ՝ որոշում) հաստատումից հետո՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր տարի համապատասխան ջրօգտա-գործողների կողմից ներկայաց-ված հայտերը կատարվում է լրացում որոշման հավելվածի «2022 թվականի Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համա-	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե	Շրջակա միջավայրի նախարարություն Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Քաղաքաշինության կոմիտե	2022 թ. և շարունա-կական	Ֆինանսավորում չի պահանջվում:

		կարգից սնվող ոռոգման ջրանցք-ների գլխամասային ջրառի պլան-ժամանակացույցը» N 2 աղյու-սակում				
2.17.	Ըստ տարեկան հաստատված առավելագույն չափաքանակի Սևանա լճից ջրթողումների և ջրառների պլան-ժամանակացույցի կազմում, ներկայացում Շրջակա միջավայրի նախարարություն (ապրիլ)	«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2022 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման (այսուհետ՝ որոշում) հաստատումից հետո՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր տարի համապատասխան ջրօգտագոր-ծողների կողմից ներկայացված հայտերը կատարվում է լրացում որոշման հավելվածի «2022 թվականի Սևան-Հրազդան էներգետիկ-իոիգացիոն համա-կարգից սնվող ոռոգման ջրանցքների գլխամասային ջրառի պլան-ժամանակացույցը» N 2 աղյուսակում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե	Շրջակա միջավայրի նախարարություն Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Քաղաքաշինության կոմիտե	2022 թ. և շարունա-կական	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.18.	Ջրօգտագործման պլանների մշակում և հայտերի ներկայացում Շրջակա միջավայրի նախարարություն	Ջրօգտագործման տարեկան ծրագրերի կազմում՝ ըստ կենցաղային, գյուղատնտեսական և արդյունաբերական պահանջարկի	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե	Շրջակա միջավայրի նախարարություն Քաղաքաշինության կոմիտե	2022 թ. և շարունա-կական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին

			Էկոնոմիկայի նախարարություն Մարզպետարաններ	Էկոնոմիկայի նախարարություն		
2.19.	Ձկան պաշարների համալրում	Էնդեմիկ և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում, մանրաձկան բացթողում և ձկների ձվադրման շրջանում որսի արգելում	Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)	Շրջակա միջավայրի նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022 թ. և շարունակական	Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի շրջանակներում
2.20.	«Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ	Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում, հետազոտման տեխնոլոգիաների կիրառություն	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Քաղաքաշինության կոմիտե	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում» միջոցառում՝ 303,897.7 հազ. դրամ

2.21.	Ապօրինի աղբավայրերի գոյացման գործընթացի կանխման և վերահսկողության իրականացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում, գույքագրման տվյալների համաձայն լուծարման ենթակա աղբավայրերի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարում	Աղբավայրերի բարեկարգում և կանոնավոր աղբահանության կազմակերպում, աղբահավաք 7-15 հարթակների նախագծում և կառուցում, ժամանակավոր օգտագործման նպատակով	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Քաղաքաշինության կոմիտե Շրջակա միջավայրի նախարարություն Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին Գեղարքունիքի մարզպետարան Քաղաքաշինության կոմիտե Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.22.	Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի կենսառեսուրսների (այդ թվում՝ ձկնային և խեցգետնային) արդյունահանման և արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակների և արդյունագործական որսի որակի բնութագրերի	«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2022 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման (այսուհետ՝ որոշում) հաստատումից հետո՝ հիմք ընդունելով նախորդ տարվա «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Քաղաքաշինության կոմիտե	2022 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:

	սահմանում՝ համաձայն հավելվածի	պաշարների հաշվառում» միջոցառման ամփոփ արդյունքները, կատարվում է լրացում որոշման հավելվածի «Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակները և արդյունագործական որսի որակի բնութագրերը» N 1 աղյուսակում				
2.23.	Ջրային պաշարների հաշվառում, նոր ջրային հաշվեկշռի կազմում	1) Համալիր ուսումնասիրությունների կատարման միջոցով հաշվառել Սևանա լճի ջրհավաք ավազանի ջրային պաշարները, ջրային հաշվեկշռի հաշվարկման նոր մեթոդիկայով ճշգրտել Սևանա լճի ջրային հաշվեկշիռը, 2) Լճի ծավալի փոքրացման ջերմունակության ու կլիմայական տարրերի փոփոխության հետ կապված գոլորշիացման ցուցանիշների ճշգրտում	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.24.	Սևանա լճի ջրհավաք ավազանի խախտված հողատեսքերի վերականգնում	Էրոզացված և խախտված հողերի վերականգնում	Տարածաշրջանի հողօգտագործողներ	Շրջակա միջավայրի նախարարություն	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.25.	Էկոլոգիական գոտիների սահմանների ճշգրտում և հողերի օգտագործման սխեմաների կազմում	• էկոլոգիական գոտիների ճշգրտում	Էկոնոմիկայի նախարարություն Քաղաքաշինության կոմիտե	Շրջակա միջավայրի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին

		• հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմում		Կադաստրի կոմիտե		
2.26.	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում մարզերի և համայնքների՝ ըստ ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում	Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կապի, տուրիզմի, քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում	Էկոնոմիկայի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և Շրջակա միջավայրի նախարարություններ Քաղաքաշինության կոմիտե	Գեղարքունիքի մարզպետարան	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.27.	Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում	Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի բոլոր բնակավայրերում ներդնել ԵՄ չափանիշներին համապատասխան աղբահանության ինտեգրված համակարգ, ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակավայրերում կուտակվող աղբը տեղափոխել Հրազդանում կառուցվող սանիտարական աղբավայր, ինչպես նաև փակել բոլոր գործող աղբանոցները	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Կոտայքի մարզպետարան Գեղարքունիքի մարզպետարան	Շրջակա միջավայրի նախարարություն	2022 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.28.	Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման գիտահետազոտական աշխատանքների համապարփակ ծրագրերի մշակում	Էկոհամակարգի վերականգնման և կայուն օգտագործման գիտական հիմունքների մշակում՝ «Սևանա լճի էվտրոֆացման մեխանիզմների գնահատում և «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակում» ծրագիր	ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով (համաձայնությամբ) Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	Շրջակա միջավայրի նախարարություն		Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին

Աղյուսակ N 1

ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

NN ը/կ	*Ձկան և խեցգետնի տեսակը*	*Ձկնորսության թույլատրելի առավել քանակություն (տոննա)*	*Ձկնորսության համար թույլատրելի չափեր և քաշը միավորի համար (սմ/գրամ)*	*Ձվադրման /բազմացման ժամանակահատվածը*
1.				
2.				
3.				
Ընդհանուր պահանջներ				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				

Աղյուսակ N 2

2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՎԱՆ-ՀՐԱԶԴԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ-ԻՌԻԳԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՄՆՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՁՐԱՆՑՔՆԵՐԻ ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ՁՐԱՌԻ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ոռոգման համակարգի անվանումը	Պայման. ոռոգ. հող. Հա	Չափման միավորը	ՄԱՐՏ			ԱՊՐԻԼ			ՄԱՅԻՍ			ՀՈՒՆԻՍ			ՀՈՒԼԻՍ			ՕԳՈՍՏՈՍ			ՍԵՊՏԵՄԲԵՐ			ՀՈԿՏԵՄԲԵՐ			ՆՈՅԵՄԲԵՐ			ԸՆԴԱՄԵՆԸ հազ. խմ
			I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.09.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ